# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

«ՇԵՆ ԴԵԿՈՐ» ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2024/7-9-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 77 | Բարձրորակ էմալ, ակրիլային ներկ, ջրով բացվող: Օգտագործվում է բարձր խոնավությամբ սենյակների, սանհանգույցների, խոհանոցների, նկուղների ներսում և դրսի պատերը ներկելու համար, որոնք պահանջում են խոնավ մաքրում: Ներկված մակերեսները կարելի է լվանալ սպունգով, լաթով և այլ չհղկվող նյութերով: Հարմար է ակրիլային կամ ալկիդային ներկերով նախկինում ներկված մակերեսների համար, նաև բետոնի, գազաբետոնի, գիպսաստվարաթղթի, աղյուսի, ծեփամածիկի, սվաղված մակերեսների համար: Ձևավորում է «շնչող», լույսի դիմացկուն ծածկույթ, որը չի խանգարում օդափոխությանը: Առանց հոտի, ունի լավ կպչունություն, ժամանակի ընթացքում չի դեղնում, սպիտակության աստիճանի բարձրացում, բարձր խոնավության դիմադրություն: Փաթեթավորումը՝ 20 կգ տարաներով: Անհրաժեշտության դեպքում մածուցիկությունը նվազեցնելու համար պետք է ջուր ավելացնել ոչ ավելի, քան 5% ծավալով: Պահպանման ժամկետը՝ 24 ամիս, ամուր փակ տարաներում, չոր սենյակներում՝ +5°C-ից +30°C-ից ոչ ցածր ջերմաստիճանում արտադրման ժամկետից, առաքման պահին՝ ոչ պակաս քան 20 ամիս: Ներկերի սպառումը՝ 120-150 գ/մ կախված հիմքի ներծծողությունից: Չորացման ժամանակը 1 ժամից ոչ ավել է +20C (±2°C) ջերմաստիճանի և 70% հարաբերական խոնավության պայմաններում: Պետք է հավաստագրված լինի հիվանդանոցներում, կլինիկաներում և բժշկական հաստատություններում օգտագործելու համար: Հատուկ պահանջներ են դրված բժշկական հաստատությունների հարդարման մեթոդների վրա. այդ տարածքների պատերը պետք է ծածկված լինեն անվտանգ նյութերով, որոնք հեշտությամբ կարող են լվանալ և ախտահանվել:Համապատասխանության պայմաներ՝ ГОСТ Р 51691-2008, СТО 05744283-062-2010 ГОСТ Р |

| | |
|---|---|
| | 51691-2008, գույնը գործարանային՝ համաձայնեցված Գնորդի հետ: Նոր, չօգտագործված: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ШЕН ДЕКОР в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2024/7-9-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 77 | |